891.99-82
4-33

№ 4 ՆՈՐ ԳՐԱԳԱՐԱՆ № 4

391.542-82
4-33

# ԿԱՐՄԻՐ ՄԵԽԱԿՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿ

ԹԻՖԼԻՍ
Էլէքտր. տպարան «Լ Պ Օ Խ Ա», Մուզէյսկի № 8.
1914

4-33
NOV 2011

№ 4 Ն Ո Ր   Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն № 4

144

# ԿԱՐՄԻՐ ՄԵԽԱԿՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿ

12129-57

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Էլէկտրաշարժ տպարան «Է Պ Օ Խ Ա», Մուղէյսկի № 8.
1914

ԱՆՎԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

20 MAY 2013

# ՔԱՂԱՔԸ

Ահա քաղաքը... հսկայ բուրգերի
մի զանգված է այն,
Թէ միապաղաղ պողպատից ձուլված
լեռների շարան,
Ուր թրամների, հեռախօսների
ցանցերը անխոնջ
Շարժի են բերում, աղմկում կեանքի
երակները ողջ։

Ահա փողոցը... մեծ, երկար ու լայն—
գետի է նման,
Ուր ոլորտներով ծփում է, եռում
հոսանքը շարժման.
Եւ ուր վիթխարի շէնքերը քարէ
երկնահուպ շարքով
Կապոյտ մի ճամպայ եզրել են վերից
անհուն լազուրքով։

Այստեղ ցուլի պէս բառանչում է, տես,
կառքը ինքնաշարժ,
Այնտեղ աղմկում հանրակառքերը,
թրամները վարժ,

Սրանց արանքից ծիծեռնակի պէս
սուրում են ճարպիկ
Հեծանիւները՝ շալակն առած
կին, տղամարդիկ...

Եւ այս ամենը, և՛ կառք, և՛ թրամ
վազքով խառներամ
Հզօր, դիւթական գաղտնի մի ձեռքով
ալիքանման՝
Պտոյտ են գալիս, որպէս համաչափ
թէմպը սլաքի,
Ու չեն խանգարում թանչը քաղաքի,
հնքը քաղաքի։

Եւ գոհ է այստեղ մարդը այսօրեան—
ոյժի ու փառքի,
Որ այս ժխորում ծծում է առողջ
հիւթերը կեանքի,
Ծծում է, քամում բոյր ու հրապոյր,
յափրում, արբենում,
—Ու չէ յագենում... ու չէ յագենում...

Օ՜, այս խնջոյքի ոլորտումներին, լոյս փո-
ղոցների հնչիւն երգերին
Անմաս է միայն ստեղծողն այն,
Որ շուք է տուել նրա վերամբարձ բազմա-
յարկերին,
Ինքը մնացել մոռացած, մենակ,
որպէս խորթ զաւակ։



Եւ բանակ դրած քաղաքածայրում—
որպէս գոռ ալիք,
Այստեղ ձուլւում է գործարաններում
սերունդը գալիք.
Օ՜, հետևեցէք նրա փոթորկող
սրտի բաբախման,
Նա էլ իր խոհերն, իր յոյզերն ունի
իր գեր-նպատակ,
Որի ծով-թափին չի դիմանալու
ոչ մի ամբարտակ...

Յակոբ Յակոբեան

---

# ԱՉՔԸ ԲԱՑԻԵՑ..

Իլխաչենց Օհանը գիւղից նոր էր եկել Բալախանի գալուց համագիւղացիներից շատերի համար բերել էր նամակներ՝ լի ուրախ ու տխուր լուրերով, իսկ իր հարեան Վանէսի համար, որը նաւթահանքերում կաթսավարի պաշտօն ունէր, բացի նամակից՝ բերել էր և «աչքալուսէք»։

Վանէսի կինը մի տղայ էր ծնել, և երբ այդ լուրը հասաւ համագիւղացիներին, նրանք.
շրջապատեցին ընկերոջը, աչքալուսէք արին ու միաձայն գոչեցին։

—Մաղարիչ, մաղարիչ...

Կաթսավարը տեսնելով նրանց ուրախութիւնը, սրտի խորքում ինքն էլ հրճւեց, արտասուքը աչքերին շնորհակալութիւն յայտնեց ու ասաց.

—Մաղարիչը՝ աչքիս վրայ. դէ որ ասում էք—իրիկունը «վախտից» յետոյ հաւաքւեցէք մի քիչ «ծամ ու ծում» անենք։

***

Ժամի 8-ին երեկոյեան, երբ Բալախանու բանւորութեան «ազատ» մասը խոր քուն մտած հանգստանում էր, որ գիշերւայ ժամի 12-ին «սմէնան» փոխարինելու գնայ, Վանէսի հիւրերը—թւով տասը-տասներկու հոգի—հաւաքւել էին ստորին ծառայողների համար յատկապէս շինած սեղանատուն ու զրոյց էին ա-



նում։ Շրջապատելով Օհանին, նրանցից ամեն մէկը իր տան ցաւ ու դարդից էր հարցնում. Օհանն էլ իր հերթին, ուրին լաւ, ուրին վատ պատասխանում գոհացում էր տալիս։

Երբ հարց առնել ու տալը վերջացաւ, ստացած լուրերի տպաւորութեան տակ սկսեցին իրենց ներկայ կացութիւնը համեմատել գիւղի հետ, վերջն էլ նկատեցին.

—Մարդ որ սոված էլ լինի՝ իրա տան դռանը լինի... տունը քաղցը բան ա...

Օհանը «հըմ» արեց, գլուխը խորհրդաւոր կերպով շարժեց ու կտրուկ ասաց.

—Դրուստ չէք խօսում։

Լսողները մնացին զարմացած այս յանկարծակի յայտարարումից. գիւղացին նրանց տարակուսանքը տեսնելով, աւելացրեց.

—Թէ որ ձեր ասածը դրուստ ա, բա ըստեղ ինչ էք շինում։

Այս անգամ Օհանի խօսքերը այնպէս հասան նպատակին, որ էլ առարկելու տեղ չը մնաց։ Այդ խօսքերը տեղիք տւին նրանցից ամեն մէկին յիշելու այն պայմանները, որից ստիպւած պանդխտել էին. էլ հողի պակասութիւն... էլ վաշխառուի տոկոսներ... էլ կարիքից տան իրերի վաճառքի հանելը... և այսպէս մէկ-մէկ յիշելով սկսեցին տխրել ու մտքերում Օհանի հետ համաձայնւել. բայց մտածելով, որ այստեղ հաւաքւել են քէֆի համար—իսկ Վանէսը դեռ չկայ—հայեացքները ակամայ ուղղեցին դէպի սեղանատան մուտքը։

Նստածներից մէկը շատերի միտքը հասկանալով, նկատեց.

—Վանէսը քաղաք ա գնացել, երևի շուտ չի գալ...

—Տեսնում էք, կամենալով տրամադրութիւն ըստեղծել,—վրայ բերեց Օնանը. կնիկը տղայ ա բերել, ուզում ա լաւ քէֆ նշանց տայ...

***

Գիշերապահ «Թոփալ» Վարդազարը, կարծելով թէ կեր ու խումը սկսել է, ներս էր մտել կոկորդը «թաց» անելու. բայց տեսնելով, որ տղերքը իրենց համար հանգիստ նստած զրոյց են անում, այնպէս ձևացրեց, թէ մարդի է մտնում՝ ու հարցրեց.

—Մուքին ըստեղ չի՞...

Ապա առանց պատասխանի սպասելու՝ դուռը փակելով, յետ գնաց։

Տիրեց մի առ ժամանակ տաղտկալի լռութիւն. սպասողական այս դրութիւնից ձանձրացած, հիւրերից մէկը իր շուրջը նայելով, յօրանջեց ու ջրակալած աչքերը ձեռքով տրորելով, ասաց.

—Ապրուստը դժուարացել ա։

Նրանցից մէկը, յիսուն տարին անց, կորացած մէջքով մի գիւղացի, պատասխանեց, որ համաձայն չէ։

—Յիսուն երկու տարեկան մարդ եմ, խօսեց նա, երկու տարի ա դարիբութիւն եմ քաշում. գիւղում մեր Թովլան սրբելուց սաւանի ուրիշ բան չեմ իմացել. ամառները չօլում, ձմեռները տաւարի մօտ—գոմում. ամմայ.. ըստեղ ուրիշ բան ա... ու ձեռքը դէպի ելէքտրական լոյսը մեկնելով, աւելացրեց.

—Էս փանարը, որ ինքն իրան առանց կրակի, առանց ճրագի վառւում, լոյս ա տալիս—ինձ աւելի շատ բան սովորեցրեց, քանց գիւղում յիսուն տարի ապրելս.. Էս փանարը ինձ ասում ա, որ մենակ մեղ պէս անճարներն են վատ ապրում... դեռ հալա ինձ դնամիշ անող կըլի թէ՝ խի՞ ես Աածու արտին քարով տալիս, հակառակ բան ասում. լաւ, տեսնում չէք, որ ում ճակատին ինջիների նշան կայ, նա էլ լէն ա ապրում...

—Հողը մեր գլխին... շարունակեց նա յուզուած, գելերի, արջերի մէջ ենք ապրել, մեծացել. հենց ենք գիտացել, թէ մեզնից դէնը աշխարհ չկայ. հրէս երեխէքս բերել եմ տուել ուսում տալու... նրանք էլա լաւ օրում ապրեն...

Ասաց ու լռեց ծերունին։

Շրջապատող նոր երևոյթները, շոգիի, ելէքտրական ոյժի գործադրութիւնը, որը երբեմն ստրուկ մարդուն նրա իշխողն է դարձնում, Մանասի (այսպէս էր գիւղացու անունը) մտքերը յեղաշրջել էին. նա կամեցաւ էլի ինչ-որ բան ասել, սակայն նրա ըմբռնողականութեան չափը հնարաւորութիւն չէր տալիս բառեր որոնել՝ մտածածն ու զգացածը որոշակի արտայայտելու ու բաւականացաւ նրանով, որ նորից պնդեց.

—Էս փանարն էր, որ իմ աչքը բացեց...

Շրջապատողներից մէկը, կաթսավար Դանիէլը աչքերը արագ ճպճպացնելով, տեղից վեր կացաւ ու կամենալով իր գիտութիւնը նոյնպէս ցոյց տալ, հանդիսաւոր կերպով նկատեց.

—Մի բան պակաս ասեցիր, Մանաս դայի. մենակ փանարը չի մեր աչքը բացողը... բա էն իրէք առաժանի տները, բա էն էլէքտրիչնի մաշինը... վիշկաներն ու բուրուղները.. սրանք փանարից պակաս են... Եւ ուզեց էլի նոր օրինակներ բերել, բայց այդ րոպէին սեղանատան դուռը բացուեց ու լսուեց Վանէսի ձայնը։

***

—Բարի ըիկուն ձեզ...

—Այ, Աածու բարին քեզ... էդքան ուշանալ կըլի՞, ադա, վրայ տուին իրար յետևից հիւրերը ու մի ակնթարթում բերած պաշարեղէնը Վանէսի ձեռքից առնելով, դարսեցին սպիտակ թիթեղով ծածկած սեղանի

վրայ, ու սկսան ախորժակով այնպէս ուտել, որ կարծես օրերով սոված լինէին։

Երբ գլուխները մի քիչ տաքացան, նոր միայն յիշեցին մանուկին ու նորածնի ծնողներին։

Օհանը բաժակը լցրեց, նոյնը պատւիրեց անել միւսներին, և ցոյց տալով, իբր թէ մտածւած ասելիք ունի՝ սկսեց.

—Ա, խիզան, լաւ լսէք... մահը մերն ա, մենք՝ մահինը, մեր սաղ չարչարանքը նրա համար ա, որ լաւ օր քաշենք. աշխարհի հր քունջ ու պուճախում էլ ըլենք, մեր տունը գեղումն ա, էս դարիը եօլքում, որ մենք էսօր ուրախանում ենք, հալբաթ մի պատճառ կայ... Էս խմենք էն պատճառի, այսինքը՝ մեր Վանէսի կնոջ ու նորածնի կենացը. հօրն ու մօրը բարի գաւակ ըլի. ծեր օրերին քեօմագ, պահի, պահպանի, ուրախացնի։

—Ամմէն, բացականչեցին հիւրերը։

—Ա Վան, գլխներիցն անպակաս ըլես, աւելացրին մի քանիսը ու դատարկեցին բաժակներով լի գինին։

Քէֆը կատարեալ դարձնելու համար մասլեհանշչիկ Շամիրը իր եղեգնեայ շւին ոարքել էր սեղանակիցներին աւելի ուրախացնելու համար. նրա ախորժ նըւագի հնչիւնների տակ կապիտալի սարուկները իրենց ցաւն ու հոգսը պահ մի մոռացած՝ սրտանց ուրախանում էին ու զւարճանում...

Ցանկարծ դայլերի ոռնոցի նման լսւեց նաւթահանքերի ու գործարանների շչակների ու գուդոկների վայոցը... կարծես նրանց գլխին սառ ջուր մաղեցին։

—Քո տէրը մեռնի, սիվիստոկ, գոչեց Վանէսը սիրտը կոտրած, ու վայրկենապէս նրանց բոլորի ուրախ տրամադրութիւնը փոխւեց տխրութեան. այդ վայրկեանին «Թոփալ» Վարդազարը—տիրոջ հաւատարիմ այդ ծառան—երկար մահակը ձեռքին ներս մտաւ և յիշեցրեց, որ հերթապահութեան ժամը հասել է, պիտի գընալ գործի մէջ գտնւողներին փոխարինել... չէ՞ որ մեքենան բոլէ անգամ նրանց սպասել չի կարող։



Հիւրերը առանց ձէն ծպտուն հանելու ոտքի ելան. Շամիրը լռելեայն շւին ծալեց ջէբը դրեց, իսկ Դանիէլը ճպճպացող աչքերը Մանասին յառելով կարծես ասելիս լինէր.

Տես, սա քո փանարից պակաս չի լոյս տալիս...

—Է՛ս էլ եանի կեանք ա, որ քաշում ենք, դժգոհելով դիմում էին նրանք դէպի նաւթահանքերը. մարդ մի քանի սհաթ ուրախանալու ու իր գլխի ազատ տէրը լինելու իրաւունք էլ չունենա՞յ...

—Էդ մէկը դրուստ էք խօսում, վրայ բերեց փիլիսոփայ Մանասը։

Նորածինն էլ քեօմագ չեղաւ ձեզ...

Մելիք

---

# ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վառուած քուրայում երկաթը կարմիր
փափկել էր, հալւում,
Հզօր մուրճի տակ, կուռ սալի վրայ,
ծեծւում ու ծալւում.
Երկաթն էր ողբում—ցայտուն կայծերով—
արցունքի խուրձեր,
Երկաթն էր մեռնում, կրակն էր Նրան
շէկ, ճկուն դարձրել։

Դեռ ծնուած օրից, երբ բերին Նրան
հեռաւոր սարից,
Քիչ յաւ չէր տեսել, մաշւել անխնայ
հնոց ու հուրից.
Տանջեցին երկար... և Նա խոփ դարձաւ
վարպետի ձեռքում,
Քաշեցին մի կողմ—մի կողքի ընկաւ
դ՝սրբնոցի բակում։

Անցան շատ օրեր և կարծես մոռցան
ամենքը նորան...
Բայց ահա դրին սար-բեռների հետ—
վաճառքի տարան.



Ու գնաց խոփը, օտար երկիրներ,
շուկաներ եկաւ,
Եւ վերջը մի օր չարքաշ գեղջուկի
Նա ձեռքը ընկաւ։

Եւ մարդու համար դարձաւ Նա անխոնջ
գործիք առօրեայ,
Ու դաշտն է գնում և հովին աշնան,
ոսկին ամառւայ.
Նրա վեհ ջանքից շատերն են կտոր
հացի սպասում—
Հենց երէկ տեսայ, այնպէս պսպղուն
հոդն էր ակօսում...

*Կամարի*

---

# ՍՊԻՏԱԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

(Բալղարական լեգենդա)

Նրանք գնում էին ձեռք ձեռքի տված և նոր զարթնած թռչունների նման խօսում—ծլլում էին...

Նորաբողբոջ մի զոյգ էր այդ, որ էն մեծ գիշերը քայլում էր նեղ փողոցներով...

Նրանք անցնում էին այն թաղերով, ուր ջլուտ բազուկներն ու մրոտած դէմքերն էին ապրում, ուր խոնաւ, մութ նկուղներում դարերով կուտակւել էր հսկայական մի բողոք, որ ահա բռնկել էր հրդեհի նման ամբողջ երկիրը...

Նրանք թողել էին տանը իրենց պապերի խորհուրդները—չմասնակցել մեծերի կռւին—և գնում էին թիթեռների նման դէպի կրակը, դէպի վտանգը...

Փողոցներում տենդոտ շարժում, իրարանցում էր. ամեն ինչ եռում էր ու սև ալիքներով հոսում դէպի կենդրոնը...

Ամբոխի հետ նրանք հասան լայնատարած մի հրապարակ, ուր խմբւել էին հազար-հազարներ և անհանգիստ ծփում, սպասում էին...

Վերջապէս ձայն եկաւ վերևից...

Փայտերից մի բարձրութիւն էին կազմել և նրա վրայից մէկը խօսում էր։

Ո՞վ էր խօսողը—մթնում չէր երևում, բայց նրա կողմը երբեմն նշմարւում էր փոքրիկ մի կայծ...



Աղջիկն ու տղան լսում էին, ականջները լարում. նրանց թւում էր, թէ խօսողը այն կայծն է, թւում էր թէ շուտով երկինքը կը բացւի ու այնտեղից կիջնեն էլի ժաղմաթիւ կայծեր, կիջնի երկրի վրայ լուսեղէն երջանկութիւնը։

—Լսեցէք էն հզօր ձայնը. դարերով ճնշած ձայնը բացւել է հիմա... նա կանչում է, կանչում...

—Բոլոր կռւողներին, բոլոր հերոսներին նա կանչում է քանդելու և ստեղծելու...

—Ամբողջ երկիրը շարժւում է, ամբողջ երկիրը վառւում է նոր կրակով։ Ով ապրում է, ով զգում է նոր կեանքի շունչը, նա պիտի գայ դէպի կռիւ, դէպի յաղթութիւն...

Յանկարծ ամբոխը իրար անցաւ...

—Գալիս են, գալիս, անցաւ բերանից բերան...

Եւ բոլորը շարժւեցին առաջ...

* * *

Գետնի վրայ գալարւում էին վիրաւորները...

Սպիտակ շորերով մի աղջիկ էր ընկած վիրաւոր, իսկ նրա կողքին մի տղայ էր ձգւել և ուզում էր իր շնչով կենդանացնել նրան...

—Ես շուտով... կը մեռնեմ... ասում էր աղջիկը... ես կուզէի, երկար ապրել քեզ հետ, այս կռւողների հետ... ես երազում էի... մենք կը գնանք բոլոր մարդկանց ազատելու...։ Երբ ես կը մեռնեմ, տար իմ դիակը... տար ինձ սպիտակ շորերով կանգնեցրու կռւողների առաջին շարքում և թող նոր բացւած արևի շողքերը դեռ էլի փայլեն ինձ վրայ...

* * *

Ծագում էր արևը...

Այն փողոցում, պատնէշի վրայից նայում էր արևին սպիտակ շորերով մի աղջիկ...

կատաղի կռիւ էր…

Քանի, քանի անգամ թշնամին յարձակւել էր «Սպիտակ աղջկայ» ամրութեան վրայ, բայց աղջիկը էլի կանգնած էր անսասան…

Նրա շուրջը ընկնում էին հերոսները, նորերը գալիս՝ նրանց տեղերը բռնում, բայց աղջիկը կար ու կար իր տեղում…

—Ո՞վ է այն անյաղթելի աղջիկը. հրաշք է… երկնքի՞ց է… չէ՞, նա այս երկրից չէ,ասում էր թշնամին ու յետ նահանջում…

*
* *

Պատմում են, որ ժամանակ առ ժամանակ սպիտակ հերոսուհին գալիս է, պտտում է տները ու երկաթէ մուրճով բաղխում դռները. Նա դուրս է կանչում իր հերոսներին և տանում է նրանց, տանում է նորից դէպի յաղթութիւն…

Արազի

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
ԱՆՎԱՆ
Публичная Библиотека

*Հրատարակութիւն տպագրական բանւորների*

## ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1) Մաքսիմ Գորկիյ. *Երկու պատմւածք* X—XI *թարգմ.* 3. *Յակոբեանի, գինը* . . . . 15 *կոպ.*

2) Ա. Բօգդանով. *Մարդու և մեքենայի միջև, թարգմ. Սէ-Դայի, գինը* . . . . . 15 »

3) Կարմիր Մեխակներ. *Ժողովածու, գինը* . . 15 »

4) » » *երկրորդ պրակ, գինը* 15 »

## *Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ա Կ Է*

5) Հիւանդանոցային դրամարկղները. *Բ. Սօլօվևի.*

**ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԷԿ**

*Վաճառւում է Թիֆլիսի գրախանութներում:*

ՀՀ Ազգային գրադարան
NL0377766

12006